r insights

Հայաստանում ոստիկանության և ոստիկանության բարեփոխումների հանրային ընկալման հետազոտություն

2026

Հիմնական արդյունքների ամփոփում

Ապրիլ 2026

Պատվիրատու՝

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն (ԵԱՀԿ)

Իրականացնող կազմակերպություն՝ ԱրԻնսայթս հետազոտական ընկերություն

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտությունը պատվիրակվել է Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ-ի) կողմից՝ Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Հաշվետու, արդյունավետ և գենդերազգայուն ինստիտուցիոնալ կառուցակարգեր ՀՀ ՆԳՆ Ոստիկանությունում և Փրկարար Ծառայութունում» (AEGIS) ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) և Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) կողմից: Սույն հետազոտության բովանդակության համար պատասխանատու է իրականացնող ընկերությունը: Այն կարող է չարտահայտել ԵԱՀԿ-ի տեսակետները:

ՆԱԽԱԲԱՆ

Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել ՀՀ ոստիկանության և ոստիկանության բարեփոխումների վերաբերյալ հանրային ընկալումները և դրանց փոփոխությունները: Հետազոտության շրջանակներում անդրադարձ է կատարվել այնպիսի խնդիրների, ինչպիսիք են ներքին ապահովության և անվտանգության սպառնալիքների ընկալումները, ոստիկանության և դրա ստորաբաժանումների նկատմամբ վստահության մակարդակը և վերաբերմունքը, ոստիկանության գործառույթների իրականացման արդյունավետության ընկալումները, ոստիկանության հետ առնչության փորձառությունը և գոհունակության մակարդակը, ոստիկանության բարեփոխումների մասին իրազեկվածությունը և դրանց նկատմամբ վերաբերմունքը, ոստիկանության համակարգում կանանց ներգրավվածության վերաբերյալ դիրքորոշումները:

Հետազոտության վերջնանպատակը բարեփոխումների առաջընթացի մշտադիտարկումն ու գնահատումն է՝ հանրության դիրքոշումների և դրանց դինամիկայի չափման օգնությամբ:

Սույն փաստաթղթում ամփոփված են 2026 թվականին իրականացված հետազոտության արդյունքները: 2024 թվականին, Եվրամիության կողմից ֆինանսավորված «Հաշվետու հաստատություններ և մարդու իրավունքների պաշտպանություն Հայաստանում» ծրագրի շրջանակում, իրականացվել է համանման հետազոտություն, ինչը հնարավորություն է տալիս 2026 թվականի արդյունքները ներկայացնել 2024 թվականի հետ համեմատությամբ:

Տվյալ փաստաթուղթն արտացոլում է հետազոտության հիմնական արդյունքների ամփոփումը: Հետազոտության արդյունքների առավել մանրամասն վերլուծությունը կներկայացվի ամբողջական համապարփակ հաշվետվության շրջանակներում:

Հետազոտությունն իրականացվել է ԱրԻնսայթս անկախ հետազոտական ընկերության կողմից:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2024 և 2026 թվականին իրականացված հետազոտությունների շրջանակներում կիրառվել է նույն մեթոդաբանությունը, ինչն ապահովում է վերջիններիս արդյունքների համադրելիությունը:

Երկու չափումների դեպքում էլ հետազոտությունն իրականացվել է հեռախոսային հարցազրույցի (CATI) մեթոդով, ստանդարտացված հարցաթերթի օգնությամբ, որի կառուցվածքը համապատասխանում է վերը շարադրված հետազոտական խնդիրներին:

2026 թվականին իրականացված հետազոտության ընտրանքի ծավալը կազմում է 1812 հարցվող, ընտրանքի սխալը ±2.3% է՝ 95% վստահելիության մակարդակի պայմաններում: Հետազոտության թիրախային խումբը 6 ամիս և ավելի Հայաստանի հանրապետությունում (ՀՀ) բնակվող չափահաս բնակչությունն է: Կիրառվել է ստրատիֆիկացված ընտրանքի մեթոդաբանություն, ՀՀ բնակչությունը ներկայացվել է 3 ստրատայով՝ Երևան, մարզային քաղաքներ, գյուղեր: Նշված ստրատաներով իրականցվել է, 604-ական հարցազրույց Երևանում, Հայաստանի Հանրապետության այլ քաղաքային և գյուղական բնակավայրերում: Վերջնական արդյունքները կշռվել են՝ նշված 3 ստրատաների համամասնությունը համապատասխանեցնելով ՀՀ բնակչության բաշխմանն ըստ Ազգային վիճակագրական կոմիտեի տվյալների[1]: Տվյալների հավաքման փուլում ընտրանքում սահմանվել են քվոտաներ՝ վերջինիս կառուցվածքը համապատասխանեցնելով ՀՀ բնակչության սեռատարիքային բաշխմանն՝ ըստ Ազգային վիճակագրական կոմիտեի տվյալների[2]:

Հարցվողներն ընտրվել են պատահականության սկզբունքով՝ պատահականորեն ձևավորված բջջային հեռախոսահամարներին զանգեր կատարելու միջոցով (random digit dialing):

2026 թվականին պատասխանելիության ցուցանիշը կազմում է 11.4%, զանգերի արդյունավետությունը կազմում է 4.2%: Հետազոտության շրջանակներում չեն ներառվել անձինք, ովքեր աշխատում են կամ ունեն մտերիմներ թիրախային ոլորտում:

[1] Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2025. https://www.armstat.am/file/article/demog_2025_2.pdf
[2] Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2025. https://www.armstat.am/file/article/demog_2025_2.pdf

2026 թվականին տվյալները հավաքագրվել են ապրիլի 7-ից 22-ն ընկած ժամանակահատվածում: 2024 թվականին տվյալները հավաքագրվել են հունվարի 11-ից 25-ն ընկած ժամանակահատվածում:

Սույն փաստաթղթում ամփոփված հետազոտությունների արդյունքներն արտացոլում են հարցվածների տեսակետները տվյալների հավաքման պահին:

Տոկոսային ցուցանիշները մեծամասամբ ներկայացված են ստորակետից հետո մեկ նիշով, ինչի արդյունքում 2026 և 2024 թվականների դինամիկայի՝ ներկայացված ցուցանիշները կարող են առերևույթ չհամընկնել նշված թվականներին արձանագրված ցուցանիշների տարբերության հետ՝ թվի հայուրերորդական արժեքից տանորդականի կլորացման արդյունքում:

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Ներքին ապահովության և անվտանգության ընկալումները

2026 թվականին հարցվողների գերակշիռ մասը՝ 69.1%-ը, Հայաստանի ներքին անվտանգային իրավիճակը համարում է այս կամ այն չափով անվտանգ, ինչը 2024 թվականի համեմատ (65.2%) աճել է 3.9 տոկոսային կետով: 2026 թվականին ներքին անվտանգային իրավիճակը լիարժեք անվտանգ է համարում հարցվողների 29.9%-ը, իսկ ավելի շուտ անվտանգ՝ 39.2%-ը: 2024 թվականի համեմատ (22.9%) 2026 թվականին ներքին անվտանգությունը լիարժեք անվտանգ գնահատողների թիվն աճել է 7.0 տոկոսային կետով կազմելով 29.9%:

Ինչպես 2024, այնպես էլ 2026 թվականին ներքին անվտանգության մակարդակը **«լիովին անվտանգ»** առավել հակված են գնահատել գյուղական բնակավայրերում (34.8%) և մարզային քաղաքներում բնակվողները (31.3%), ինչպես նաև՝ բարձրագույն կրթություն չունեցող հարցվողները (2026թ.՝ 32.6%): Մյուս կողմից, 2026 թվականին ներքին անվտանգության մակարդակը «լիովին անվտանգ» գնահատողները համեմատաբար ավելի քիչ են հակված երևանաբնակները (24.7%) և 31-45 տարիքային խմբի (24.6%) հարցվողները՝ ի համեմատ մյուս տարիքային խմբերի:

Ըստ հարցվողների ընկալման՝ 2026 թվականի դրությամբ Հայաստանի քաղաքացիների ապահովությանը և անվտանգությանը սպառնացող ամենալուրջ խնդիրներն են թմրամոլությունը և թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը՝

31.7%, մանր հանցագործությունները՝ 19.6%, ինչպես նաև անհանդուրժողականությունն ու հանցագործությունների աճը՝ 16.3%: Անհանդուրժողականության մթնոլորտում հանցագործությունների աճը որպես անվտանգային խնդիր մատնանշողների թիվը 2026 թվականին աճել է 11.1 տոկոսային կետով (2026թ.՝ 16.3%, 2024թ.՝ 5.2%): Անվտանգությանը սպառնացող ամենալուրջ ընկալվող խնդիրների շարքում կրկնակի աճել է նաև **մարդասպանությունը մատնանշողների մասնաբաժինը** (2026թ.՝ 14.3%, 2024թ.՝ 7.3%): Ճանապարհային անվտանգությունը որպես ներքին անվտանգային խնդիր նշվել է հարցվողների 12.8%-ի կողմից, ինչը 2024 թվականի համեմատ (10.7%) աճել է շուրջ 2 տոկոսային կետով: Մյուս կողմից, 2024 թվականի համեմատ **կրկնակի կրճատվել է** կոռուպցիան և պաշտոնական դիրքի չարաշահումը որպես ներքին անվտանգային խնդիր մատնանշածների թիվը (2026թ.՝ 7.4%, 2024թ.՝ 15.1%):

2026 թվականին հարցվողների գերակշռող մեծամասնությունը՝ 92.1%-ը, նշել է, որ ցերեկային ժամերին միայնակ փողոց դուրս գալիս իրեն ապահով է զգում, ընդ որում՝ 73.7%-ը՝ լիարժեք չափով: Ի համեմատ 2024 թվականի, 2026 թվականին ցերեկային ժամերին միայնակ փողոց դուրս գալիս իրենց ապահով զգացողների թիվը նվազել է 0.8 տոկոսային կետով (2026թ.՝ 92.1%, 2024թ.՝ 92.9%): Նվազումը համեմատաբար ավելի նկատելի է արական սեռի ներկայացուցիչների (նվազել է 2.1 տոկոսային կետով՝ 94.0%-ից դառնալով 91.9%) և բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում (նվազել է 1.8 տոկոսային կետով՝ 94.0%-ից դառնալով 92.2%):

2026 թվականի դրությամբ, **գիշերային ժամերին միայնակ փողոց դուրս գալիս իրենց ապահով են զգում հարցվողների 77.4%-ը, որոնց շարքում լիարժեք ապահով զգացողները կազմում են 52.2%:** 2024 թվականի համեմատ 2.6 տոկոսային կետով աճել է գիշերային ժամերին իրենց ապահով զգացողների թիվը՝ 74.9%-ից դառնալով 77.4%: Ցուցանիշի աճը առավել արտահայտված է Երևանում բնակվող (աճել է 4.4 տոկոսային կետով՝ 73.0%-ից դառնալով 77.5%) և իգական սեռի հարցվողների շրջանում (աճել է 4.2 տոկոսային կետով՝ 65.8%-ից դառնալով 70.0%):

Երկու չափումների դեպքում էլ **ցերեկային ժամերին միայնակ փողոց դուրս գալիս ապահով զգալու ընկալումները գրեթե նույնական են** արական և իգական սեռի ներկայացուցիչների շրջանում, մինչդեռ գիշերային ժամերին արական սեռի հարցվողներն ավելի հաճախ են նշել ապահով զգալու մասին (2026թ.՝ 86.3%, 2024թ.՝ 85.8%), քան իգական սեռի հարցվողները (2026թ.՝ 70%, 2024թ.՝ 65.8%): Ընկալման նման տարբերությունը որոշակիորեն նկատվում է նաև աշխատող և չաշխատող հարցվողների միջև. 2026թ.

աշխատողներն ավելի հաճախ են նշել, որ գիշերը միայնակ փողոց դուրս գալիս իրենց ապահով են զգում՝ 79.5%, քան չաշխատողները՝ 75.2%:

2026 թվականին ինչպես ցերեկային, այնպես էլ գիշերային ժամերին ապահով չզգալու ամենատարածված պատճառը **հանցագործություններից տուժելու ռիսկի ընկալումն է**. **ցերեկային ժամերին** այն որպես ապահով չզգալու պատճառ նշել է հարցվողների 47.3%-ը, իսկ **գիշերային ժամերին**՝ 40.2%-ը: Ի համեմատ 2024 թվականի՝ ցերեկային ժամերին **հանցագործություններից տուժելու ռիսկի ընկալումն** աճել է շուրջ 27 տոկոսային կետով (2026թ.՝ 47.3%, 2024թ.՝ 20.6%), իսկ գիշերային ժամերին՝ 14.3%-ով (2026թ.՝ 40.2%, 2024թ.՝ 25.9%):

Մյուս կողմից, 2026 թվականին մոտ 13% տոկոսային կետով նվազել է **ճանապարհատրանսպորտային պատահարից տուժելու կամ վրաերթի ենթարկվելու՝ ընկալվող ռիսկի տարածվածությունը,** որպես ցերեկային ժամերին ապահով չզգալու պատճառ, 33.6%-ից դառնալով 21.3%: Բացի այդ, շուրջ 9 տոկոսային կետով նվազել է **թափառող շների և/կամ այլ կենդանիներից եկող ռիսկը՝** որպես գիշերային ժամերին ապահով չզգալու պատճառ ընկալողների թիվը՝ 37.7%-ից դառնալով 29.3%:

ՆԳՆ, ոստիկանության և դրա ստորաբաժանումների նկատմամբ վստահությունը և վերաբերմունքը

2026 թվականին հարցվողների 52.8%-ը լիովին կամ գրեթե լիովին վստահում է ոստիկանությանը, 21.8%-ը ոստիկանության նկատմամբ վստահության մակարդակը գնահատել է միջին՝ նշելով, որ «ոչ վստահում է, ոչ էլ չի վստահում»: Ոստիկանությանը չվստահող հարցվողները կազմում են 21.2%: 2024 թվականի համեմատ՝ ոստիկանության նկատմամբ լիարժեք և գրեթե լիարժեք վստահության հանրագումարային ցուցանիշն աճել է 7.5% տոկոսային կետով՝ 45,4%–ից հասնելով 52.8%-ի, իսկ անվստահության ցուցանիշը գրեթե նույնական է 2024 թվականին արձանագրված ցուցանիշի հետ (նվազումը կազմում է 0.5%):

Երկու չափումների դեպքում էլ ոստիկանության նկատմամբ վստահության մակարդակն ավելի բարձր է ՀՀ մարզերը ներկայացնող, հատկապես՝ գյուղաբնակ հարցվողների շրջանում, քան Երևանում: Գյուղերում ոստիկանությանը լիովին և գրեթե լիովին վստահողները 2026 թվականին կազմում են 60.6%, իսկ 2024 թվականին՝ 51.0%, մինչդեռ Երևանում լիովին և գրեթե լիովին վստահողները 2026 թվականին կազմում են 45.4%, իսկ 2024 թվականին՝ 36.8%: Իգական սեռի հարցվողների շրջանում ոստիկանության նկատմամբ վստահության մակարդակը շարունակում է մնալ ավելի բարձր (2026թ.՝ 58.2%, 2024թ.՝ 48.4%)՝ ի համեմատ

արական սեռի հարցվողների (2026թ.՝ 46.5%, 2024թ.՝ 41.7%): Բարձրագույն կրթություն չունեցող հարցվողների շրջանում նույնպես համեմատաբար ավելի մեծ է ոստիկանությանը վստահողների տոկոսը (2026թ.՝ 55.5%, 2024թ.՝ 50.4%)՝ ի համեմատ բարձրագույն կրթություն ունեցողների (2026թ.՝ 48.7%, 2024թ.՝ 36.9%): Միևնույն ժամանակ, 2026 թվականին ոստիկանության նկատմամբ **վստահության մակարդակի ամենամեծ աճը** նկատվում է **բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում**. ցուցանիշն աճել է 11.9 տոկոսային կետով 36.9%-ից դառնալով 48.7%:

ՆԳ նախարարությանը լիովին և գրեթե լիովին վստահում է հարցվողների 54.3%–ը, 18.7%-ը ՆԳՆ նկատմամբ իրենց վստահության մակարդակը գնահատել են որպես միջին, իսկ 15.4%–ը նշել է ՆԳՆ նկատմամբ լիարժեք կամ գրեթե լիարժեք անվստահության մասին: **ՆԳՆ նկատմամբ վստահության ցուցանիշը 2024 թվականի համեմատ աճել է 12.8 տոկոսային կետով՝** 41.5%-ից հասնելով 54.3%–ի: 3.6 տոկոսային կետով կրճատվել է ՆԳՆ նկատմամբ իրենց վստահության մակարդակը գնահատել դժվարացողների թիվը՝ 14.1%-ից դառնալով 10.6%:

2026 թվականին հարցվողների 63.9%-ը նշել են, որ **դրական վերաբերմունք** ունեն Հայաստանի ոստիկանության նկատմամբ. ցուցանիշը 2024 թվականի համեմատ **աճել է** 6.8 տոկոսային կետով: Ոստիկանության նկատմամբ **չեզոք վերաբերմունք** ունեցողները կազմում են 20.4%, **իսկ բացասական վերաբերմունքի** մասին նշել են հարցվողների 14.8%, ինչը գրեթե չի փոխվել 2024 թվականի համեմատ (14.7%):
Ինչպես վստահության դեպքում, այստեղ նույնպես գյուղաբնակ հարցվողների շրջանում **դրական վերաբերմունք ունեցողների համամասնությունն ավելի մեծ է** (70.4%), քան երևանաբնակ հարցվողների շրջանում (56.0%): Բարձրագույն կրթություն չունեցող հարցվողներն առավել հակված են դրական վերաբերմունք արտահայտել ոստիկանության նկատմամբ (68.1%), քան բարձրագույն կրթություն ունեցող հարցվողները (2026թ.՝ 57.1%): Ի համեմատ 2024 թվականի, 2026 թվականին բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում 9%-ով աճել է ոստիկանության նկատմամբ դրական վերաբերմունք ունեցողների համամասնությունը՝ 48.1%-ից դառնալով 57.1%:

2026 թվականին հարցվողների գերակշռող մեծամասնությունը՝ 97.8%-ը, լսել է պարեկային ոստիկանության մասին, 91.1%՝ օպերատիվ կառավարման կենտրոնի, 88.9%-ը՝ համայնքային ոստիկանության և 88.8%-ը քրեական ոստիկանության մասին: Հարցվողները համեմատաբար ավելի քիչ են լսել ոստիկանության գվարդիայի մասին՝ 71.5%. ընդ որում, վերջինիս մասին իրազեկված հարցվողների 21.9%-ը դժվարացել են գնահատել իրենց վերաբերմունքը

ստորաբաժանման նկատմամբ: Բոլոր նշված ստորաբաժանումների նկատմամբ հարցվողների դրական վերաբերմունքը գերազանցում է 50%–ը. պարեկային ոստիկանության նկատմամբ դրական վերաբերմունքը կազմել է 65.9%՝ արձանագրելով 3.7 տոկոսային կետի չափով աճ և հանդիսանալով ամենաբարձրը մնացած ստորաբաժանումների համեմատ, համայնքային ոստիկանության նկատմամբ դրական վերաբերմունքը կազմել է 59.2%, քրեական ոստիկանութան նկատմամբ համապատասխան վերաբերմունքը՝ 52.4%: Ոստիկանության գվարդիայի նկատմամբ դրական վերաբերմունքի ցուցանիշն ամենացածրն է և կազմում է 48.0%: Հիշատակված ստորաբաժանումների նկատմամբ վերաբերմունքը չափող հարցը տրվել է միայն այն հարցվողներին, ովքեր լսել են ստորաբաժանման մասին:

2026 թվականին հարցվողների գերակշիռ մասը՝ 66.6%-ը, համաձայն է, որ **ոստիկանությունն արագ արձագանքում է կանչերին**, ինչը 2024 թվականի 58.3%-ի համեմատ աճել է 8.3% տոկոսային կետով Բացի այդ, հարցվողների 61.1%-ը գտնում է, որ **ոստիկանությունը քաղաքացիների նկատմամբ ցուցաբերում է արդար և հարգալից վերաբերմունք**, ինչն աճել է 8.1 տոկոսային կետով՝ 2024 թվականին արձանագրված 53.0%-ի համեմատ: Հարցվողների 60.3%-ը համաձայն է, որ **ոստիկանությունը գործում է պրոֆեսիոնալ կերպով և բարեվարքության կանոններին համապատասխան**. ցուցանիշն աճել է 2024 թվականի. համեմատ (50.7%) 9.6 տոկոսային կետով Հարցվողների 51.5%-ն է կարծում, որ ոստիկանությունը **քաղաքացիների դեմ ֆիզիկական ուժը կիրառում է համաչափ և իրավաչափ**, ցուցանիշն աճել է 7.3 տոկոսային կետով՝ ի համեմատ 2024 թվականի:

0.7 տոկոսային կետովաճել է այն հարցվողների թիվը, որոնք կարծում են, որ ոստիկանությունը **լիարժեք կամ գրեթե լիարժեք պատասխանատվություն է կրում սեփական իրավախախտումների համար՝** դատողության հետ համաձայնողների տեսակարար կշիռը 56.2%-ից դարձել է 56.9%: Միևնույն ժամանակ, 1.9 տոկոսային կետով նվազել է այն հարցվողների թիվը, ովքեր գտնում են, որ **ոստիկանությունը պատասխանատվություն չի կրում՝** 32.0%-ից դարձել է 30.1%: Վերջիններս ինչպես 2024, այնպես էլ 2026 թվականին իրենց կարծիքը հիմնավորել են՝ նշելով, որ նախ և առաջ «ներքին վերահսկողությունն անկատար է, այսինքն՝ բավարար չափով չեն պահպանվում բարեվարքության և էթիկայի նորմերը» (2026թ.՝ 29.9%, 2024թ.՝ 38.6%), «ականատես են եղել նման դեպքերի, որ ոստիկանությունը չի պատժվել» (2026թ.՝ 23.6%, 2024թ.՝ 14.8%), «օրենքն իրենց ձեռքում է, իրենք իրենց պաշտպանում են, դեպքերը քողարկում» (2026թ.՝ 18.2%, 2024թ.՝ 7.4%):

Ոստիկանության աշխատանքով բավարարվածության մակարդակը

2026թ. հարցվողների գերակշիռ մասը՝ 65.4%-ն այս կամ այն չափով բավարարված է ոստիկանության կողմից **ճանապարհային անվտանգության ապահովման**, 62.0%-ը՝ **քաղաքացիների անվտանգության ապահովման**, 58.3%-ը՝ **հանրային հավաքների ընթացքում հասարակական կարգի պահպանման արդյունավետությամբ**: Հարցվողների 45.3%-ն է բավարարված ոստիկանության՝ **ընտանեկան բռնության դեմ պայքարի**, 43.7%-ն՝ **անչափահասների հետ տարվող աշխատանքի**, 43.3%-ը **գողության դեմ պայքարի արդյունավետությամբ**: Ընդ որում, հարցվողներն ամենաշատը դժվարացել են գնահատել իրենց գոհունակության մակարդակը ընտանեկան բռնության դեպքերին ոստիկանության արձագանքի արդյունավետությամբ. հարցվողների **21.0%-ը դժվարացել է պատասխանել այս հարցին**: Ի համեմատ 2024 թվականի՝ հարցվողների բավարարվածության մակարդակը բարձրացել է ոստիկանների գրեթե բոլոր ուսումնասիրված գործառույթների առնչությամբ, հատկապես՝ **ընտանեկան բռնության դեմ պայքարի արդյունավետությամբ** (ցուցանիշն աճել է 7.2 տոկոսային կետով 38.1%-ից դառնալով 45.3%), և **քաղաքացիների անվտանգության ապահովման արդյունավետությամբ** (աճել է 5.8 տոկոսային կետով՝ 56.2%-ից դառնալով 62%):

Ուսումնասիրված գործառույթների շարքում՝ հարցվողների **բավարարվածության մակարդակն ամենացածրն** է **թմրամիջոցների հետ կապված անօրինական գործողություններին ոստիկանության արձագանքի արդյունավետության հարցում**. հարցվողների 36.0%-ն է այս կամ այն չափով բավարարված ոստիկանության գործողությունների արդյունավետությամբ, ինչը, սակայն, 2024 թվականի 4.6 տոկոսային կետով աճել է:

ՆԳՆ և ոստիկանության առանձին ստորաբաժանումների հետ առնչությունը և գոհունակությունը ոստիկանության աշխատանքից

2026 թվականին հարցվողների 9.4%-ը փաստել է, որ երբևէ հայտնվել է այնպիսի իրավիճակում, որ **տուժել է հանցագործությունից**, բայց չի դիմել ոստիկանություն. ցուցանիշը 2024 թվականի 8.5%-ի համեմատ աճել է 0.9 տոկոսային կետով Հանցագործությունից տուժած, բայց ոստիկանությանը չդիմած հարցվողների 26.8%-ը նշել է, որ չի դիմել ոստիկանություն, քանի որ բյուրոկրատական քաշքշուկը շատ է: 2024 թվականին նման իրավիճակում հայտնված և ոստիկանությանը չդիմած հարցվողների 23.5%-ը որպես չդիմելու պատճառ նշել էր վստահության բացակայությունը ոստիկանների նկատմամբ, ինչը

2026 թվականին նշվել է շուրջ 10 տոկոսային կետով ավելի քիչ հարցվողների կողմից՝ դառնալով 13.7%:

2026 թվականին շուրջ 4 տոկոսային կետով աճել է **համայնքային ոստիկանի** հետ առնչվելու փորձ ունեցող հարցվողների թիվը՝ 6.9%-ից դառնալով 11.3%: Համայնքային ոստիկանությունով բավարարվածության մակարդակը կազմում է 68.1%, այն երկրորդ բարձր ցուցանիշն է՝ օպերատիվ կառավարման կենտրոնից հետո, որով բավարարվածությունը կազմում է 83.5%:

2026 թվականին պարեկային ոստիկանության հետ առնչվելու փորձ ունեցած հարցվողները կազմում են 33.8%, ինչը 2024 թվականի 36.3%-ի համեմատ նվազել է շուրջ տոկոսային կետով: Պարեկային ոստիկանության հետ առնչված հարցվողների մեծ մասը՝ 61.2%-ը, նշել են, որ չափազանց կամ ավելի շուտ գոհ են պարեկային ծառայության աշխատանքից. գոհունակության ցուցանիշը 2024թ. համեմատ նվազել է շուրջ 2 տոկոսային կետով**:** Երկու չափումների դեպքում էլ նույն քանակով հարցվողներ միջին են գնահատել իրենց գոհունակության մակարդակը պարեկային ոստիկանությունից՝ նշելով, որ «ոչ գոհ են, ոչ էլ դժգոհ»՝ 2026թ.՝ 18.1%, 2024թ.՝ 17.2%:

ՆԳՆ–ում և ոստիկանությունում տեղի ունեցող առանձին բարեփոխումների վերաբերյալ իրազեկվածության մակարդակը և դրանց նկատմամբ վերաբերմունքը

2026 թվականին հարցվողների կեսից ավելին՝ 62.1%-ը, նշել են, որ լսել են **ոստիկանության բարեփոխումների** մասին, որոնցից 8.4%-ը՝ քաջատեղյակ են բարեփոխումներից, միչդեռ 53.8%–ը լսել է, բայց մանրամասներին ծանոթ չեն: 2024 թվականին բարեփոխումների մասին լսած հարցվողները կազմել են 47.1%. ցուցանիշն աճել է շուրջ 15 տոկոսային կետով: 2024 թվականի համեմատ՝ շուրջ 13 տոկոսային աճել է նաև այն հարցվողների թիվը, ովքեր նշել են, որ լսել են բարեփոխումների մասին, բայց մանրամասներին ծանոթ չեն: Ոստիկանության բարեփոխումների մասին երբեք չլսած հարցվողները 2024 թվականի համեմատ նվազել են շուրջ 16%-տոկոսային կետով 52.6%-ից դառնալով 37.3%:

Պարեկային ծառայության՝ ամբողջ հանրապետության տարածքում գործարկման մասին իրենց քաջատեղյակ համարող հարցվողները կազմում են 18.0%, մինչդեռ 2024 թվականին պարեկային ծառայության ստեղծման մասին իրենց քաջատեղյակ էին համարում 20.0%–ը: Հարցվողների 58.2%-ը նշել են, որ լսել են պարեկային ծառայության՝ ամբողջ հանրապետության տարածքում գործարկման մասին, սակայն մանրամասներին ծանոթ չեն, իսկ 2024 թվականին. պարեկային ծառայության ստեղծման մասին լսած, բայց

մանրամասներին չտիրապետող հարցվողները կազմում էին 57.5%: Այդուհանդերձ, ոստիկանության բարեփոխումների շարքում պարեկային ծառայության գործարկման մասին իրազեկվածության ցուցանիշն **ամենաբարձրն** է՝ համեմատած բարեփոխումների այլ ուղղություններից տեղեկացվածության մակարդակի հետ:

Օպերատիվ կառավարման կենտրոնի ձևավորման մասին իրենց քաջատեղյակ համարող հարցվողները կազմում են 8.2%, վերջիններիս թիվը 1.7 տոկոսային կետով աճել է 2024 թվականի 6.6%-ի համեմատ: Միևնույն ժամանակ, 2026 թվականին շուրջ 4 տոկոսային կետով ավելացել են այն հարցվողները, որոնք նշել են, որ լսել են ՕԿԿ ձևավորման մասին, սակայն չեն տիրապետում մանրամասներին (2026թ.՝ 42.1%, 2024թ. 38.0%):

Ոստիկանության Գվարդիայի ստեղծման մասին լսել են հարցվողների՝ 54.9%, որոնց 5.9% գտնում է, որ քաջատեսյակ է բարեփոխման մասին, իսկ 49.1%՝ չի տիրապետում մանրամասներին: **Ձրային պարեկային ծառայության ստեղծման մասին տեղեկացվածները** կազմում են հարցվողների 47.1%, որոնց, 7.6%-ը գտնում են, որ քաջատեղյակ են կառույցի ստեղծման մասին, իսկ 39.5%՝ լսել են, բայց մանրամասներին չեն տիրապետում:

Համայնքային ոստիկանության բարեփոխման մասին իրենց քաջատեղյակ համարող հարցվողները 2026թ. կազմում են 5.5%. ցուցանիշն աճել է 2024թ. 2.4%-ի համեմատ՝ 2.1 տոկոսային կետով: 2026 թվականին աճել է նաև այն հարցվողների թիվը, ովքեր նշել են, որ լսել են համայնքային ոստիկանության բարեփոխման մասին՝ առանց մանրամասներին տիրապետելու՝ աճը կազմել է 6.4 տոկոսային կետ՝ (2026թ.՝ 33.9%, 2024թ.՝ 27.5%):

Քրեական ոստիկանության բարեփոխման մասին իրազեկված հարցվողների համամասնությունն ամենափոքրն է՝ 36.2%, որից 4.1%-ն իրենց քաջատեղյակ են համարում բարեփոխման մասին, իսկ 32.1%-ը գտնում են, որ մանրամասներին չեն տիրապետում: Այդուհանդերձ, վերջիններիս թիվն աճել է 2024 թվականի համեմատ 4.8 տոկոսային կետով՝ 27.3%-ից դառնալով՝ 32.1%:

Գնահատելով ոստիկանության աշխատանքում կատարված փոփոխությունները՝ **հարցվողների կեսից ավելին՝ 54.4%-ը, նշել են, որ նկատել են ոստիկանության աշխատանքի բարելավում. ցուցանիշն աճել է 1.8 տոկոսային կետով՝ 2024 թվականի 52.6%-ի համեմատ:** Միևնույն ժամանակ, 2026թ. 25.2%-ը որևէ փոփոխություն չի արձանագրել ոստիկանության աշխատանքում (2024 թվականին ցուցանիշը կազմում էր 27.3%): Բացասական փոփոխություն արձանագրած հարցվողների թիվն աննշան աճել է 8.6%-ից դառնալով 9.2%-ն:

Պարեկային ծառայության ներդրման արդյունքում արձանագրած փոփոխությունները գնահատելիս՝ հարցվողների մեծ մասը՝ 68.7%–ը, նշել են, որ դրանք դրական փոփոխություններ են: 2024 թվականին բացասական փոփոխություններ նկատած հարցվողները փոքրամասնություն են կազմում ՝ 7.8%, ինչը նվազել է 2024 թվականի 8.6%-ի համեմատ 0.8 տոկոսային կետով:

Պարեկային ծառայության ներդրման արդյունքում **դրական փոփոխություններ արձանագրած հարցվողների** 25.2%-ը կարծում է, որ դրական փոփոխություն է **պարեկների քաղաքավարի ու պրոֆեսիոնալ հաղորդակցությունը**, ինչը 2024 թվականի համեմատ (16.6%) աճել է շուրջ 8% տոկոսային: Դրական փոփոխություններ արձանագրած հարցվողների 23.2%-ը նշել են, որ ոստիկանությունը գործում է բարեվարքության և օրինականության սկզբունքների համաձայն, ևս 22.5%-ը՝ որ գործառույթներն իրականացնում է արդյունավետ կերպով (մասնավորապես՝ ճանապարհներին ապահովության զգացման ավելացումը, մեքենաներից գողությունների, վեճերի թվի նվազումը, ալկոհոլի կամ թմրանյութի ազդեցության տակ գտնվող անձանց վրա ուշադրության կենտրոնացումը և այլն): 2024 թվականի համեմատ շուրջ 5 տոկոսային կետով աճել է այն հարցվողների թիվը, ովքեր գտնում են, որ երթևեկությունը բարելավվել է, վթարները նվազել են, խցանումները՝ կարգավորվել (2026թ.՝ 18.6%, 2024թ.՝ 14.2%):

Բացասական փոփոխություններ արձանագրած հարցվողների շրջանում երկու չափումների դեպքում էլ առավել հաճախ մատնանշվել է, այն ընկալումը, որ պարեկային ոստիկանության **որակավորումը բավարար չէ ճանապարհներին իրավիճակը կարգավորելու համար**. 2024 թվականին այս կարծիքը կիսել են բացասական փոփոխություններ արձանագրած հարցվողների 33.8%–ը, իսկ 2026 թվականին՝ 24.6%: Ի տարբերություն 2024 թվականի, բացասական փոփոխություններ արձանագրած հարցվողների շրջանում շուրջ 14% տոկոսային կետով աճել է այն հարցվողների թիվը, ովքեր գտնում են, որ պարեկային ոստիկանությունը չի գործում բարեվարքության և օրինականության սկզբունքների համաձայն՝ 8.8%-ից դարձել է 23.2%: Հարցվողները հիմնականում նկատի են ունեցել իրենց ավտոմեքենան «անհիմն» կերպով կանգնեցնելը, երբեմն նաև՝ տուգանքները, «անարդար վերաբերմունքը» քաղաքացիների նկատմամբ:

Ոստիկանության համակարգում կանանց ներգրավվածության ընկալումները

2026 հետազոտության շրջանակներում արձանագրված՝ ոստիկանության համակարգում կանանց ներգրավվածության ընկալումները համանման են 2024 թվականին արձանագրված պատկերի հետ: Ինչպես 2024, այնպես էլ 2026 թվականին

հարցվողների գերակշիռ մասը՝ 70% և ավելին, կարծում է, որ կանայք և տղամարդիկ հավասարապես ունակ են աշխատել ոստիկանական համակարգի այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են **ընտանեկան բռնության դեմ պայքարի բաժինները**՝ (2026թ.՝ 84.4%, 2024թ.՝ 84.5%), **վերլուծությունը և վիճակագրությունը** (2026թ.՝ 84.3%, 2024թ.՝ 85.7%), **կառավարումը**՝ (2026թ.՝ 83.8%, 2024թ.՝ 83.2%), **համայնքային ոստիկանությունը** (2026թ.՝ 77.0%, 2024թ.՝ 78.3%), **պարեկային ոստիկանությունը** (2026թ.՝ 79.5%, 2024թ.՝ 78.2%), **քրեական ոստիկանությունը** (2026թ.՝ 73.3%, 2024թ.՝ 72.2%): Համեմատաբար ավելի քիչ թվով (55.5%) հարցվողներ են գտնում, որ կանայք և տղամարդիկ հավասարապես ունակ են աշխատել ոստիկանության գվարդիայում:

2026 թվականին հարցվողների ճնշող մեծամասնությունը՝ 82.6%-ը, համաձայն է, որ կին ոստիկանը կարող է կապ հաստատել և ավելի արագ վստահություն ներշնչել ընտանեկան կամ որևէ այլ տեսակի բռնությունից տուժած կնոջը. ցուցանիշը 2024 թվականի համեմատ (82.0%) աճել է 0.6 տոկոսային կետով:

Մյուս կողմից, 2026 թվականին հարցվողների 53.6%-ն է համաձայն, որ ոստիկանական աշխատանքը կնոջ համար հարմար աշխատանք է. այս ընկալման տարածվածությունը 2024 թվականի համեմատ աճել է 1.6 տոկոսային կետով:

Երկու չափումների դեպքում էլ հարցվողների 1/5 մասը համաձայն չէ, որ ոստիկանական աշխատանքը կնոջ համար հարմար աշխատանք է (2026թ.՝ 20.6%, 2024թ.՝ 18.6%):

Մյուս կողմից, երկու չափումների դեպքում էլ հարցվողների 48%-ը համաձայնել է այն մտքի հետ, **որ ոստիկանական ծառայությունում անհրաժեշտ է ավելի մեծ թվով կին ոստիկաններ ունենալ:** Այս դատողության հետ համաձայն չեն հարցվողների՝ մոտ 1/4 մասը (2026թ.՝ 25.6%, 2024թ.՝ 24%):

Ամենափոքր թվով հարցվողներ համաձայն են այն մտքի հետ, որ **կին ոստիկանները կարող են արդյունավետ կերպով զսպել բռնի ուժով ուղեկցվող բախումները**. այս դատողության հետ այս կամ այն չափով համաձայն է հարցվողների 46.4%-ը, ինչը 2024 թվականի. համեմատ աճել է 3.4 տոկոսային կետով: Այս դատողության վերաբերյալ չեզոք կարծիք ունեն 19%-ը, ինչը նվազել է 2024 թվականի համեմատ 2 տոկոսային կետով: Դատողության հետ անհամաձայնություն հայտնող հարցվողները կազմել են 30.9%:

2026 թվականին շուրջ 7%-ով աճել են այն հարցվողները, ովքեր նշում են, որ հետաքրքրված չեն ոստիկանությունում աշխատանքի անցնելու հնարավորությամբ. վերջիններիս տեսակարար կշիռը 59.8%-ից հասել է 67.1%–ի: Հարցվողների 4.8%–ն է գտնում, որ ունի

բավարար տեղեկատվություն ընթացակարգերի մասին ոստիկանությունում աշխատանքի անցնելու ընթացակարգերի մասին:

Հարցվողների սոցիալ-ժողովրդագրական նկարագիրը

2026 թվականին հարցվողների 54.2% կազմել են իգական սեռի ներկայացուցիչներ, իսկ 45.8%՝ արական սեռի: Հարցողների 38.7% ներկայացնում են Երևանը, իսկ 61.3%-ը՝ մարզերը: 19.2%-ը պատկանում են 18-30տ., 28.8%՝ 31-45տ., 22.6%՝ 46-60տ., իսկ 29.4%՝ 61տ. և բարձր տարիքային խմբերին: Բարձրագույն կրթություն ունեցող հարցվողները կազմում են 36.6%, իսկ չունեցողները՝ 62.4% (1%-ը հրաժարվել է նշել իրենց կրթության մակարդակը):